

Գ. ԳԱՐՆԳԻՆՅԱՆ, Ժամանակակից հայոց լեզու. բարդ նախադասություն, Երևանի համալսարանի հրատարակչություն, Երևան, 1984, 421 էջ:

Որքան էլ զարմանալի լինի, բայց փաստ է, որ ժամանակակից հայերենի բարդ նախադասության մասին ավելի շատ են ծավալուն ուսումնասիրությունները, քան պարզի վերաբերյալ: Իսկ սա, ըստ երևույթին, նշանակում է նաև, որ ավելի դժվար է բարդ նախադասության մասին մի այնպիսի ամբողջական աշխատություն գրել, որի մեջ ամփոփվի նախորդ ուսումնասիրությունների արդյունքը, և առաջադրվեն նոր հարցեր, լեզվական երևույթների դասակարգման ու քննության նոր տեսանկյուններ ու մոտեցումներ, նաև տրվեն հարցերի նորովի լուծումներ: Ահա Գրիգոր Գարեգինյանի այս նոր աշխատությունը բռնում է հենց այս կարգի քննությունը:

Աշխատության երկու զխավոր բաժիններն են՝ «Բարդ համադասական նախադասություններ» և «Բարդ ստորադասական նախադասություններ»: Վերջում կից են կրեք, եթե կարելի է ասել, լրացուցիչ բաժիններ՝ «Պարբերություն», «Ուրիշ ուղղակի խոսք» և «Կետադրություն», իսկ աշխատության սկզբում շորս փոքր մասեր կան, որոնք թեև չեն կրում ներածություն ընդհանուր խորագրեր, բայց դրա արժեքն ունեն: Հեղինակը նրանցում ներկայացնում է իր հիմնադրույթները. բարդ նախադասության իր բնութագրերը տալուց հետո, անմիջապես տարրոշում է ըստ արտահայտության (ձևի) միմյանցից զանազանվող երկու կարգի բարդ նախադասություններ՝ շաղկապ ունեցող և չունեցող: Այս ներկայացնում է բարդ նախադասությունների ավանդական երկու տեսակների առանձնացման հիմունքը՝ համադասությունը և ստորադասությունը բարդ նախադասություններում: Եվ վերջապես շարադրում է իր մի զխավոր սկզբունքը՝ բարդ նախադասությամբ բաղադրված միավորման ու հարաբերությունների մասին. ըստ այդմ, տարբերում է բառական (շաղկապներ, հարաբերականներ և հարաբերականներ) և ոչ բառական միավորում (հնչերանգ, շարադասություն, եղանակաբանական, ձևերի հարաբերակցություն): Տրվում է յուրաքանչյուրի տեսություն, հաճախ սպասիչ բնութագրում: Որինակ, շարադասության կապականները պարզապես մասին խոսելիս՝ նախ միմյանցից զանազանում է հայերենի կապական և ազատ շարադասական կապակցները, ապա մեկ առ մեկ թվարկում է այն դեպքերը, երբ բարդ նախադասության բաղադրիչները (պարզ նախադասությունները) կապուն (անխախտ) շարադասություն են ունենում:

Գիտենք որ, ամեն պիտության էական մասն է կազմում քննվող տարրերի դասակարգումը: Որքան որ հստակ ու տրամաբանական է այդ դասակարգումը, այնքան գիտական ճշմարտությանը մոտ է լինում եզրահանգումը (լուծումը): Սա մեծ չափով է վերաբերում քերականությանը, և Գ. Գարեգինյանի այս աշխատությունը ամենից առաջ նշույթի տրամաբանական, համոզիչ դասակարգման նմուշ է:

Բարդ համադասական և բարդ ստորադասական ավանդական խմբավորումն անելուց հետո, Հեղինակը հաջորդ աստիճանում դասակարգում է համադասականները՝ միավորիչ, հակադրական, տրոհական և այլն: Այս, անցնելով հայերենի բարդ ստորադասական նախադասության քննությանը, այդ նախադասությունները երկու խմբերի է բաժանում՝ անմասնատունակ և մասնատունակ: Այսինքն՝ բարդ ստորադասական նախադասություններ, որոնց ստորադաս անդամը (նախադասությունը) կարող է առանձնացվել որպես ինքնուրույն պարզ նախադասություն և այնպիսիք, որոնց երկրորդական նախադասություն իրեն խոսքային առանձին միավոր՝ անջատել անհնար է: Սա անհրաժեշտ տարրոշում է, քանի որ այս երկու խմբերը միմյանցից քերականորեն էապես են տարբերվում: Մի հանգամանք, որին նախորդող հայ շարահյուսագետները հարկ եղած ուղղորդված չեն արժանացել: Այնուհետև թվարկվում են երեք դեպքեր, որոնց առկայությունը պայմանավորում է նախադասության անմասնատունակ լինելը, և այն շորս դեպքեր, երբ ունենում են մասնատունակ կապակցներ: Այս ամենը բարդ ստորադասական նախադասությունների դասակարգում է մի տեսանկյունից: Մի այլ բնույթի, բայց և նախորդի հետ անշաղկապ տեսանկյունից կատարված դասակարգում է բարդ ստորադասական նախադասությունների քերականական կարեորագույն արտահայտությունը մարմնավորող կապակցման բառական միջոցների խմբավորումը: Այստեղ նախ տարբերակված են՝ 1) շաղկապներ (ստորադասական), 2) հարաբերական դերանուններ, 3) ցուցականներով արտահայտված հարա-

բերյալները. Ապա՝ երկու խմբի են բաժանված ստորադասական շաղկապները՝ մենիմաստ և բազմիմաստ. առաջին խմբում են այն շաղկապները, որոնք ակնհայտորեն իմաստաւիր են (որովհետև, ֆանի ու, շնչւյտած ու, արեւմե և այլն) և իրենց իմաստով արդեն իսկ մատնանշում են ղլխավոր և երկրորդական նախադասությունների հարաբերության բնույթը. երկրորդ խմբում են այն շաղկապները, որոնց բառիմաստը որոշ չէ և որոնք ի վիճակի չեն նշելու ստորադասական հարաբերության բնույթը (ու, րե, Լըր, որպեսզի):

Բարդ ստորադասական նախադասությունները դասակարգված են նաև նրանցում հարաբերյալների ունեցած մասնակցության տեսանկյունից. այս դեպքում էլ երեք խումբ է առանձնացված. Սրան հետևում է հարաբերյալների (նա, ույն, նույն, այնպիսի, ամենը, բայցը և այլն) մի այլ դասակարգում՝ ըստ ղլխավոր նախադասություն մեջ նրանց ունեցած դերի, և մանավանդ, ըստ երկրորդական նախադասության հետ նրանց ունեցած կապի. Այս վերջին սկզբունքով հարաբերյալները բաժանված են երկու խմբի՝ 1) զուտ կառուցվածքային արժեք ունեցող, 2) ավելի քիչ կառուցվածքային, ավելի շատ ռակտիս արժեք ունեցող հարաբերյալներ. Ապա հարաբերյալների գործառնություն տեսակետից ստորադասական նախադասությունները բաժանված են երեք այլ խմբերի, որին հաջորդում են հարաբերյալների գործածության երկու տեսակի՝ պարտադիր և ոչ պարտադիր դեպքերի թվարկումները:

Այսպես՝ առաջնային, երկրորդային, երրորդային, երբեմն նաև չորրորդային դասակարգումներին, ինչպես և նույն նյութի տարբեր տեսանկյուններից կատարված դասակարգման միջոցով աստիճանաբար բացահայտվում, ներկայացվում է ժամանակակից հայերենի բարդ նախադասությունային ամբողջական կառուցվածքը, պատկերը. Դասակարգման յուրաքանչյուր աստիճանում յուրաքանչյուր տեսակ կամ խումբ հիմնավորվում է անհրաժեշտ փաստարկներով ու փաստերով. օգտագործված է բնագրային շատ հարուստ նյութ՝ քաղված հայ դասական և ժամանակակից բազմաթիվ հեղինակների երկերից, թարգմանական գրականությունից, մամուլից, ինչպես և գիտական աշխատություններից:

Կատարված խմբավորումներն այնքան որոշակի ևն, յուրաքանչյուր խմբի համար բերված օրինակներն այնքան բնութագրական, որ այս գրքի մի շարք հատվածներ կարող են շարահյուսական տեղեկատուի գեր կատարել:

Ընդվական նյութի վերլուծությունը խորն է կատարված ու մանրակրկիտ. հաճախ հանդիպում ենք շարահյուսական մանրամասների այնպիսի հստակ բնութագրումների, ինչպես հետևյալն է. Երբեք շաղկապով նպատակի պարագա երկրորդական նախադասությունը ազատ շարահյուսություն է ունենում. իսկ ու շաղկապով՝ կայուն, միայն հստակ (ղլխավորի համեմատ):

Կարելի է ասել, որ ժամանակակից հայերենի բարդ նախադասության ուսումնասիրությունն աստիճանական զարգացում է ապրել. այս աշխատությունը նախորդների ունեցած արժանիքների աստիճաններով բարձրացած մի նոր աստիճան է նշանավորում. Այն առանձնանում է ամենից առաջ նրանով, որ ընդվական նյութը առավելապես ներկայացնում է, և՛ կարելի է ասել, խոստորեն քերականացված համակարգումներով. առաջին դիրքում է արտահայտությունը, երկրորդում՝ բովանդակությունը, և շարահյուսական նկարագրությունը նկատելիորեն ազատված է ուղեկցող, հաճախ ոչ քերականական բնույթի բնութագրումներից. Գ. Գարեգինյանի ուղադրության կենտրոնում է ընդվական նյութի զուտ կառուցվածքային նկարագրությունը, կապակցման միջոցների (շաղկապներ և այլն) միասնական քննությունը, կառուցների կաղապարումը. Գլխավոր և երկրորդական նախադասությունների կապակցման միջոցները քննության առաջին դիրք մղելը նույնպես հեղինակի մի կարևոր սկզբունքն է, և կտրվում եմ, հիմնավորված. կապակցման միջոցների բնույթի, տեսակների ըմբռնման աստիճանը ուղիղ համեմատական է առհասարակ բարդ ստորադասական նախադասության էության ըմբռնման աստիճանին, այն հստակ չափանիշներ է տալիս ստորադասականը համադասականից տարբերակելու համար, մեծապես օգնում է երկրորդական նախադասության բնույթը (թե ղլխավորի որ անդամն է) որոշելուն և այլն:

Վերջ խոսվեց կապակցման միջոցների ներկայացված դասակարգման մասին. հարկ է նշել, որ այդ բնույթի դասակարգումը հեղինակի նորամուծություններից մեկն է հայ շարահյուսագիտության ասպարեզում. Այդ ոլորտում ուղադրվ է նաև ճղանկավածամանակային հարաբերակցությունների՝ հեղինակի ներկայացրած ամբողջական պատկերը. Ո՞ր կառուցներում է բայի եղանակի ու ժամանակի ձևերի կիրառությունն ազատ կամ որ բնույթի երկրորդականներին ինչ եղանակ ու ժամանակ է հատուկ և այլն. Աշխատությունը այսպիսի հատվածները գործնական օգտակարություն ևս ունեն՝ հատկապես գրավոր խոսքում բայի ժամանակների ճշտ կիր-

բառություն համար, չնկարգված հայտարարելով է ժամանակակից հայերենի բարդ ստորագրական կառուցվածքում բայի եղանակաժամանակային կապակցական դերերի օրինաչափությունները: Եվ, առհասարակ, ուղարկության կենտրոնում ունենալով կապակցական միջոցների քննությունը, մի շարք, նախքան այս ընկած, օրինաչափություններ են ի հայտ բերված: Միաժամանակ, ձև-վիզ ղովանդակությունն անցնելով, Գ. Գարեգինյանը ցույց է տալիս, թե ի՞նչ կապակցական շարահյուսական հարաբերությունը իմաստային ինչ արժեք ունի ե կամ իմաստային այս կամ այն նորերանդը շարահյուսական-կառուցվածքային բնութթի ինչ պատճառով է դրանում:

Հեղինակը, անշուշտ, հայերենի բարդ ստորադասական նախադասության պատկերը ներ-
կայացնելու համար օգտագործել է նաև ավանդական կարգերը, սահմանումները, դասակար-
գումները. կարևոր տեղ են զբաղեցնում Մ. Աբեղյանի «Ախարհաբարի շարահյուսության»
դրույթների, ինչպիսի և հետագա հայ շարահյուսագետների և մանավանդ ուսական արդի թե-
մադասագիտության նվաճումների, ինչպիսի և առհասարակ նորագույն շարահյուսագիտության
ստեղծագործական օգտագործումը: Ստեղծագործական, ըստի, որ ամեն զեպքում Գաբրիելյանը
մտածում է իր քննությունից հանված որևէ նոր ձգբահանգույն կամ մանրամասն, որ նախկինում
չի նշվել: Օրինակ, բարդ ստորադասական նախադասությունների քննությանը նվիրված ուսում-
նախորություններում կենտրոնական հարց է զխաղվոր նախադասության անդամների արտա-
հայտությունը երկրորդական նախադասություններով, որ այլ կերպ կոչվում է երկրորդական նա-
խադասությունների բյույթը (ենթակա, որոշիչ, խնդիր և այլն): Գ. Գաբրիելյանի գրքում նույն-
պես տեղ է գտել այն ավանդական հատվածը, բայց յուրօրինակ անվանումներով, խմբավոր-
ումներով և մեկնություններով:

Հարցերի ընդգրկման տեսակետից ես կան նորույթներ. օրինակ, հայերենի շարահյուսութիւնը նվիրված նախորդ աշխատութիւններում չէի գտնի պարբերութիւնս ե բարդ շարահյուսական ամբողջութիւն վերաբերյալ այն տեղեկատվութիւնը, որը բերված են այստեղ: Կամ գրքում բազմաբարդ նախադասութիւն վերաբերյալ սպառել ընտելացրումներ են տրված, որոնք նույնպիսի ամբողջութիւն մը չեն ներկայացրել նախորդ հայ շարահյուսագիտները: Եվ կամ՝ հեղինակը լեզվական նյութի քննութիւն մը հայտնացրել է ու ներկայացրել որիշի ուղղակի խոսքի դիմակի բոլոր փոփոխութիւնների օրինակաբերութիւնները: Հայոց լեզվի պարբերութիւն մասին հատված կա միայն Մ. Արեղյանի «Աշխարհագրարի շարահյուսութիւն» մեջ (միտներում չկա): Գ. Գարեգինյանը ես իր այս ամբողջական ուսումնասիրութիւն մեջ զետեղել է այդպիսի դուրս: Շարահյուսութիւնը նվիրված նախորդ գրքերում (չհաշված գլորոցական դասագիրքը) չկա կետադրութիւնը նվիրված բաժին. Գ. Գարեգինյանը գրել է այդպիսին: Կամ բարդ ստորադասական նախադասութիւն պարզեցման վերաբերյալ միայն Մ. Արեղյանի է խոսել ու նմուշներ տվել՝ ցրված աշխատութիւն տարբեր մասերում: Գ. Գարեգինյանը այդ հարցին առանձին բաժին է նվիրել և այլն:

Այս ուսումնասիրությունը, անկասկած, հայերենի բարդ նախադասությանը նվիրված բոլոր աշխատություններից ամենամաժրոջականն է: Այն հեղինակի երկար տարիների կատարած հետազոտական աշխատանքի մի մեծարժեք հանրագումար է, իր ստուգությամբ, տեղեկատվական վստահելիությամբ, շատ հարցերի սպառիչ լուծումներով, ուստի և գիտական արժանիքներով այս աշխատությունը նկատելի ներդրում է հայ ճեթականագիտության առպարեզում: Հեղինակն ունի իր գիտական ձեռագիրը, ինքնօրինակ մոնեցուսները, տեսակետները, որոնք կարելի է բնութագրել իրեն ճշտից ճշգրիտ որոնելու և գտնելու հակում:

Իհարկե, կարելի է և վիճել որոշ հարցերի շուրջ կամ գիտողությունների անել։ օրինակ, թվում է թե հեղինակը երբեմն փոքր-ինչ շատ է հրապուրվում որոշ առաջնականագետների շարաշրջանական կազմապարտմանով (որոնք, բնականաբար, հայերենի նյութի հիման վրա չէ, որ կաշվված են)։ Կամ՝ դժվար է համաձայնվել հեղինակի այն տեսակետին, ըստ որի ուրիշի ուղղակի խոսքը երկրորդական նախադասություն արժեք չունի և այլն։ Այս և հնարավոր այլ գիտողությունները բնավ էական չեն. Գ. Գրեգորյանի ապացույթ է հանել գիտության խիստին, առաջնականքի մի երկ, որն այսուհետև լրջորեն նկատի են առնելու հայերենի բարդ նախադասական շարաշրջանություն և առհասարակ հայոց լեզվի քերականությունը զբաղվողները։

ՌԱԶԱՅԵԼ ԻՇԽԱՆՅԱՆ

Բանասիրական գիտությունների դպրոց